

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՅԻ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԵ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,
ԱՐՑՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՂԻՊՏՈՍ	
Գանիրէի համար	սարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան 60
» » վեցամսեայ	35
ԱՐՏԱՍԱՆՏԱՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
վեցամսեայ	» 10
ՌՈՒՍԻՅՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	րուբլի 7
վեցամսեայ	» 4
ԲԱՅԱՆՈՐԴԱԿՅՈՒՆ ԿԱՆԵԿ Ե	
ԵՒ ԹՂԹԱՍԵՐԻ ԾԱԽԲԸ	
Թերթին վարչութեան վրայ է	

ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԴԵԿՏ. 6/19

ՔԱՆ ՓԱՐԱՑ ՈՂԶ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 56

ՊԱՐՍԿԱՅԱՅԵՐԸ

Երբ Պարսից Շահը Պոլիս այցելեց ոմանք կը կարծէին թէ երկու մահ-մետական վեհապետներ զիրար զըրկելով և համբուրելով ամեն ինչ լըմնցած էր, նամանատանք Հայոց համար : Իրաւ է թէ Սուլթանը շահաց համոզել Շահը որ թշնամի քաղաքականութիւն մը բռնէ Պարսկաստան բնակող հայերու նկատմամբ, որ իրեն պէս Շահն ալ հայերու շարք մը տայ Պարսկաստանի մէջ, որպէսզի իրեն սփրիններուն մեղաւորի մը գանձած ըլլայ այլապէս մէջ ու վերջը դատնայ ըսէ ծիծաղելով «տեսէք հիմակ ալ Պարսկաստանի մէջ սկսան հայերը բռնատուութիւն ընելու» :

Ինչ նենդամիտ քաղաքականութիւն իրայց Շահը Սուլթանին նենդամիտ քաղաքականութենէն չը խտրուեցաւ, և փոխանակ Հայոց նկատմամբ Համիտեան քաղաքականութիւն բռնելու, բնդհակառակը Պոլիսէն Պարսկաստան վերադարձին յատկապէս գնաց այցելեց էլմիմիսին Հայոց վեհապետ Կաթուղիկոսին, անոր տարվճիկի-խորչիտի շքանշանը, և Պարսկաստան մը տած օրուան հետեւեալ օրը ֆէրման մը հրատարակեց որուն մէջ Պարսկաստան բնակող և գաղթող լայր հայերուն կարգ մը առանձնաշնորհումներ տուաւ : Այս ֆէրմանով Պարսից Շահը հրամայեց որ հայերը հոն իրաւունք ունենան առանց կառավարութենէն արտօնութիւն ստանալու վարժարաններ բանալ, թերթեր և քաղաքական լրագիրներ հիմնել, վերջապէս Սուլթանին չի շնորհած ամեն ազատութիւն Պարսկական հողին վրայ վայելել :

Երոպական թերթերէն ոմանք մինչև ցարդ կը կատակէին որ մի գուցէ Շահը այս առանձնաշնորհումներով Հայոց քթին խնդայ : Որովհետև Շահին Պոլիս այցելութենէն ի վեր Շահին ու Սուլթանին յարաբերութիւնները փոխանակ լաւնալու գէշացած ըլլալուն, կրնայ ըլլար որ Շահը թուրքի Սուլթանին հակառակ ըլլալու համար այսօր կարգ մը առանձնաշնորհումներ կը տեղադրէ, որպէսզի այդ առանձնաշնորհումներէն Արտասահմանի հայերը զանազան կերպով զաղթեն Պարսկաս-

տան և անգամ մը իր լուծին ներքեւ ստուարածիւ Հայ գաղթականութիւն մը կազմուի եւ վերջ Շահն ալ թուրքիոյ բռնած քաղաքականութեան հետեւ : Երոպական աղբիւրէ ծնած այս կատակներու առանց կարեորութիւն տալու որոնք աղբի մը միտքը պղտորելու հանգամանքն ունին, առիթն թող օգտուին Պարսկաստանի Հայերը և ամեն բանէ առաջ ոյժ տան ազգային կրթական զարգացման, որպէ միայն կախեալ է Հայ սերունդին ազգական : Թող երկարատարութեան Մուզաֆֆէրտի Շահին որ այնքան ազնիւ գտնուեցաւ, յատուկ հրովարտալու մը հատաստի այն կարգ մը առանձնաշնորհումները որոնք արդէն շատ սցորուած էին հայոց :

Մուզաֆֆէրտի Շահը այդ հրովարտակը ստորագրելով-յառաջագիմութեան և լուսոյ նոր շաւիղ մը բացաւ իր հպատակ հայերու :

Այդ հրովարտակով ըսել ուզեց հայերուն «Պատուեցէք առիթէն, բացէք գարոյնը, ազատօրէն զրեցեք ու հրատարակեցէք թերթեր, քանի որ թուրքիա և այլուր այդ մասին ձեր ազատութիւնը բռնաբարուած են» : Թող վստահ ըլլան մեր Պարսկահայերը Պարսից Շահին անկեղծութեանը վրայ : Թող վստահ ըլլան նաև որ իրենց գործակից պետի ունենան Արտասահմանի ի մասնաւորի եղիպտոսի հայ եղբայրները :

ՍՈՒՇԵՂԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Անգուժ մարդասպանութեան մը առթիւ մահուան գատապարտուելէ վերջը, անցեալ շաբաթ օր Պապէլ-Խալքի հրատարակը կախապան բարձրացող Եագուզ Հաննայի մասին «Նոր Օր» ի մէջ երեցած յօդուածի մը, ներքև ուշադրութեան հանդիպեցաւ ակնարկ մը հարեանցի Եագուզ Հաննայի բաղադակից խեղճ Մուշեղին նկատմամբ :

Մուշեղ Եղիպտոսի ծանօթ անուններէն մին է : Մուշեղ ասիէ հինդ աարի առաջ Մուշէն Եղիպտոս եկող Շուքրի անուն թուրք զինուոր մը ըսպանած ըլլալուն, մահուան գատապարտուող ու կախապանի վրայ գըլխատուող ընտանեաց և զաւակներու տէր հայր մ'էր :

Ո՞վ էր Մուշեղ, և ինչ էր պատճառը որ սպաննեց Շուքրի Չափուշը : Թէ ինչ նկատուեցերով մահուան պատիժը չը ներուեցաւ Մուշեղի և գործադրուեցաւ իր վրայ : Թէ ինչո՞ւ համար Եագուզ Հաննայի նման չատեր երբ կախուեցան ու զխատուեցան Եղիպտոսի մէջ, ոչ որ համարձակեցաւ տանց վրայ արտասանել բառ մը գուժի և կամ ցայրութի, ու երբ խնդրը Մուշեղի շուքը չափաւ, Եղիպտոսի համբէն բռնատուութիւնը կղերէն սկսեալ աշխարհականը, մամուլը «նորու՞ Մուշեղին, գիմութիւն Մուշեղին» գոչեցին ու աղերսական ձայնը բարձրացուցին ուղղեալ Եղիպտոսի Ապպաս իշխանին :

Եղիպտական մամուլը սիւնտիներ նուիրեց Մուշեղի գլխատմանը : Այն ատենները հայերէն թերթ չի կար, վերջէն հրատարակուած թերթերն ալ առիթը չունեցան այս մասին երկտող մը շարագրելու :

Դարձաւ ու դարձաւ վերջապէս «Նոր Օր» ին ինկաւ բաժին արձանագրել իր սիւնտիներու մէջ Մուշեղի մահապարտութեան յիշատակելի պատմութիւնը :

Մուշեղ ընկ Մշեցի, կայստո, կարմրաշաւայ, երկայնահասակ երկտասարդ մ'էր 28 տարեկան : Բաղդին թշուառութիւնը և Հայաստանի գաւառներու անգործ վիճակը 1892 թուականին բերած նեւած էին զինք Աիբրիկեան ցամաքը, ուր պետի թագուի եղեր այնքան անակնկալ կերպով այդ խեղճին կեանքը :

Մուշեղ երբ կը հասնի Գահիրէ, շնորհի իր յանձնարարեալ պարկեշտութեան, առանց ապին անկին գեղերելու, կը յաշողի մանկ Սանտուաններու ծխախոտի գործարանը իբր պարզ գործատու : Մուշեղի յատկացուած ամսականը այնքան չնչին էր, որ հարկադրուած էր նա վերջին աստիճանի խնայողութեամբ ապրել, հայրենիք իր ընտանիքին և զաւակներուն հացի գրամ գրկելու համար : Արդէն ասիէց կրնանք ըբռնել թէ Մուշեղի ընտանեկան կացութիւնը որ ատիճան տխուր էր :

Երևակայեցէք իրաց այս վիճակը ինչպէս կրնայ շտապագինել Մուշեղի սիրտը, երբ սա կը ստանար նամակներ սրոնք յաջորդաբար կը գուժէին հայրենիքէն ողբալի լուրեր :

Մէկ շաբթուն նամակ մը կառնէ ուր կը կարդայ մօրը սպաննուիլը, միւս շաբթուն նամակ մը կառնէ ու կը տեղեկանայ զաւակաց շարուիլը :

Ալ այս սղերեզական տրամներուն առջև Մուշեղին ողին ինչպէս չը լուծուիր վրէժխնդրութեան ոգով հանդէպ Սուլթանի և իր վայրագ զիշատիչներուն :

Այդ միջոցին, ասիի ճշգրտօրէն ըսելու համար, 1893 տարուին օգոստոսի վերջերը Մշոյ քաղաքին սուվալուի գայլի մը նման Գահիրէ կը հասնի Շուքրի Չափուշ անուն թուրք զինուոր մը : Շուքրի Չափուշ նամանպէս Մշեցի, թուրք հօրմէ և բարդ մօրմէ ծնած, կրնան և հինգ մարկական հուժկու զինուոր մ'էր որ Մշոյ մէջ չըրած շարիքները չէր մնացած հայերուն : քանի քանի հայերու տուները քանդած, ինչքերը կողոպտած և ասոնց արիւնք ծծած ու չը յաղեցած հրէշ մըն էր Շուքրի Չափուշ, որ հրատարակաւ իսկ պարծնեցած էր իր գործած անդլութիւններու վրայ : Գանի քանի մարդկիններ գեռ կենդանի կը վկայեն թէ երբ Շուքրի Չափուշ իր սովորական գետնութեամբ կը բազմէր Գահիրէի սրճարանին մէկ անկիւնը՝ հաւաքելով իր շուքը հետաքրքիրներու խումբ մը, պարծնեալով կը պօտար «այսքան հայ սպանում եմ. այս ինչ մարդուն ինչքը կողոպտած եմ : Երբեմն իր քաջութիւններուն հարազատ պատմութիւն մը ըրած ըլլալու համար յականէ անուանէ կըսէր. «Գիտէ՞ք, Մուշեղին մայրը և հայրը ես սպաննեմ եմ» : Ուրիշ օր մ'ալ սրճարանին մէջ նստած տեղը իր մէջքի գօտին քակելով «կը տեսնէ՞ք սա գօտին, Մշոյ հայ ապաներէն մէկուն գօտին է որ մինչև հիմայ կը գործածեմ, Աստուած ողորմէ հոգուն Մշոյ կողոպտուէն ինձի բաժին ինկաւ» ըսելով կը յոխորտար :

Կը հարցնեմ, Մուշեղի, իր համակիրներուն, իր ազգակիցներուն, նոյն ինքն Շուքրի Չափուշ ունկնդրողներուն տեղ ո՞վ ըլլար չը պետի գայթակղուէր Շուքրիի այդ լրբասաց քարոզներէն :

Շուքրիի նման շատ անգուժներ տեսնուած, որ Սուլթանի կառավարութեան թոյլտուութենէն օգտուելով և անոր քաջայերական խոստումներէն

չփայտած, հայոց նկատմամբ նախ-
ճիւղներուն ամենանողկալիները կը
գործեն ամեն օր, ջարդելով, կողոպ-
տելով, լլկելով Հայաստանի գաւա-
ռաբնակ հայութիւնը: Բայց երբ ա-
տոնք երկրէն դուրս կեցնեն Եգիպ-
տոս և կամ այլուր, գոնէ ուխտաւորի
կամ մէյմէկ սուրբի կերպարանք
կանեն ու բերանին կը սրբեն:

(Շարունակելի)

Ք.

ԻՆՉՈՒ ԿԱՄՈՒՍՆԱՆԱՆ

(Շար. Յախորդ թիւէն եւ վերջ)

Առ Օրհորդ Մ. Ս.

Տհաս բազարակրթութեան մը, նախա-
պաշարեալ բարբերու և անորոշ նկարագրի
մը ապացոյցները չեն այս ամենը: Ամուս-
նութեան նպատակը վերածել՝ տնտեսագի-
տական հարցի մը վիճակին, խել, վերցնել
անոր մէջէն ինչ որ ունի գեղեցիկ և վսեմ,
չի փնտռել երկու տարբեր սեփականող
անհատներու միութեան մէջ ազնուագոյնը
կապերուն, միմիայն այս պարագան բաւա-
կան է հաստատելու համար թէ տակաւին
շատ և շատ հեռու ենք լուսաւորեալ ազգ
մը ըլլալէ:

Այն ազգերը որ ՍԻՐՈՅ վեհափառու-
թեան առջև չեն խնայող, չեն ճանաչեր
անոր ամենակարգութիւնը, և կանգնա-
նան անոր կատարած առաստաղացուցիչ գերը,
կը գրկեն իրենք զիրենք զարգացեալ ազգ
մը կոչուելու իրաւունքը:

Այս դժբաղդ կացութեան մէջ կը գրա-
նուինք մենք հայերս, պէտք է խոստովանիլ:

Արարչագործութեանը՝ անհուն բարու-
թեամբ մը, չէ զրացած սակայն ամեն բա-
նաւոր էակի սրտին մէջ գնելու սիրոյ ըզ-
գացումին սերմերէն:

Պատճառ մը չի կայ ուրեմն կարծելու
թէ մենք հայերս, այդ կանոնին բացառու-
թեան կը կազմենք և նախախնամական
կարգադրութեան մը շնորհիւ, զրկուած ենք
երկնային պարգևներու այդ լուսագոյնէն:

Դրախտի խորհրդաւոր կատակերգութեան
մէջ կը տեսնենք թէ Արարչը սիրոյ անըս-
պա գանձեր գրաւ նախատիպար ամուլին
սրտերուն մէջ որոնք շոյլօրէն սպառնցին
այդ գանձերը խնձորենիի մը կոճղին ներ-
քէ:

Դիտարարութիւնս՝ Աստուածաշունչի վրայ
սննդած հմտութեան ցուցունել չէ, կերպ-
նում ձեզի, օրհորդ, այլ հասկնել մեր
ծնողներուն թէ իրենք Բարձրեային աւելի
խօսապահանջ ըլլալու իրաւունքը չունին:

Եթէ ամուսնութիւնը միայն և մի միայն
փոխադարձ սիրոյ վրայ հիմնուած օրէնք մը
չըլլար Աստուած չէր կրնար միթէ Եւայի
ափին մէջ սպրդել իբրև գրամօթիտ 700
սովինոց լեյ մը Պանք Օթօմանի վրայ
և տալ Արամին իբրև դրամագուլտի՝ 5000 հատ
. . . Պանք ինտիւթիւնի Կալիօններէն:

Պիտի առարկէք գուցէ, Օրհորդ, թէ անկէջ
ի վեր ժամանակները շատ փոխուած են և
թէ այժմ ամեն մէկ գոյգի համար ձրի զը-
րախտ մը կարելի չէ գտնել:

Ժամանակներ, կրնան փոխուած ըլլալ,
հակառակը չեմ պնդեր, բայց մարդը միշտ
միևնոյնը կը մնայ, սա տարբերութեամբ
որ հիմնական Ազամ Եւանքը օձի մը թե-
լադրութեանը պէտք չստանի. . . խնձոր մը
փրցնելու համար:

Սէրը՝ ամուսնութեան սկզբնապատճառը

պէտք է ըլլայ. տարբեր կերպով ներքի չէ
ըմբռնել այդ խորհուրդին գոյութեան պա-
ճառը:

Յաւալի է սակայն տեսնել թէ մեր մէջ
սիրոյ ամուսնութիւնները գոյութիւն չունին
բնաւ: Ինչու:

Նախ անոր համար որ մենք սիրոյ վրայ
շատ գէշ գաղափար մը ունինք. Սէրը մեզ
համար ամօթ մըն է, յանձանք մը, ոճիր մը:
Ես բարեկամներ ունեցած եմ որոնք յո-
խորտանքով և պարծնկոտ գոհացումով մը՝
— Ես մէկ նստելուս, կէս օրս Տիգ կը
խմեմ գիտես, ըսած են ինձի. բայց չեմ
հանդիպած երիտասարդի մը որ առանց բաշ-
ուելու և առանց կարմրելու խոստովանի թէ
աղջիկ մը կը սիրէ նոյն իսկ ամենէն գովե-
լի նպատակով:

Սէրը՝ ֆորթգաւնաթիւն բառով մկրաբ-
ուած է մեր մէջ և ֆորթգաւն աղջիկ մը կամ
մանջ մը բորտի մը տպաւորութիւնը կը
թողու իր շուրջը գանձուողներուն վրայ:

Բնութեան գէմ հայոյն և անոր հրամա-
նին գնմ ըմբոստանու չէ ասիկայ:

Եւ ըսել, օրհորդ, թէ սիրոյ պէս բա-
բոյացուցիչ, անոր պէս բարբերը ազնուա-
ցնող, նկարագրները բարձրացնող ուրիշ
զգացում չէ տուած Աստուած մարդուս:

Ճշմարտ, մարդու սէրը մինչև հերո-
սութեան կը մղէ զմարդ, կեանքի պայքա-
րէն յոգնած, ձախորգութիւններու տակ
ճնշող, ապրելէ ձանձրացած երիտասարդի
մը անհնչելի ի վար թող աղջիկ մը ըսէ
թէ անկեղծօրէն, սրտով, իր զգացումներուն
ամբողջ թափովը կը սիրէ զինքը և պիտի
տեսնէք թէ այդ վճատած երիտասարդը նոր
ոյժեր պիտի առնէ, պիտի աշխատի և վեր-
ջապէս պիտի յաղթի ընկերութեան մէջ
զիրք մը շինել և օրին մէկը, խանդավառ
հպարտութեամբ մը պիտի գայ իր սիրաբ
գնել սիրականին ստորեւն առջէ:

Ասանկ հրաշքներու շատ անգամ վկայ
եղած եմ ես և ասոր համար է որ չեմ
վարձարք երգելու սիրոյ փառաբանութիւնը:

Քաղաքակրթութեան աշխարհին մէջ մենք
գաճաճեց ենք տակաւին և բնականաբար
չեմ կրնար պահանջել ո՛ր և է Նիկողոս
աղայէ մը, կիրակոս Լեֆեանի մը, տիրացու
Մարկոսէ մը կամ կարապետ աղբարէ մը
որ սիրոյ վրայ ունենայ այն հատաբար զոր
ես օճում և որ դուք կրնալ ունենալ:

Գնա ըսէ անոնց թէ սիրոյ պէս ազնիւ,
բարձր, մարդս՝ Աստուծոյ հաստաբեցնող
զգացում չկայ, վրազ պիտի խնդան և շատ
շնորհակալ ըլլալու ես եթէ երեսդ ի վեր
չնս ըսեր թէ պարզապէս սրիկայ մըն ես:

Ասոնք կը կարծեն թէ երբ սէրը կը
պաշտպանես, և անոր վրայ կը ճառես,
անպատճառ Հոգում աղջիկ մը ունիս որուն
պատուհանին տակ, կէս գիշերէն վերջ, ֆոր-
թեգաւնաթիւն պիտի երթաս:

Ապո՛ւշները:
Իսկ եթէ երբեք իմանան թէ սարաֆ կամ
վաճառական Գիրգոր աղային աղջիկը կը
սիրես և ան ալ քեզ կը սիրէ, օ՛հ, այն
ատեն բարեկին անգամ կը զարեցնեն:

Աւանակները:
Յօգուածս անոնց համար զիմ գրած,
անոնք բան չեն հասկնար ասկէ, ուստի կը
զառնամ ձեզի, Օրհորդ, և կը խնդրեմ որ ներ-
էք եթէ ձեր այնքան կարճ հարցումին այն-
քան երկայն պատասխան մը տալու հարկին
մէջ կը գտնուիմ:

Սիրոյ վրայ ըրած այս գովասանքս պէտք
չէ որ կարծեցնէ ձեզի թէ ամեն անգամ
սերէն հնչուութիւն և հրճուանք կը ծորէ:
Անոր պատճառած գաճաճութիւնները և ոչ մէկ
զաւարթութիւններու կը նմանին:

Սէրը, ո՛վ ազնիւ Հայունի, ցնորական
յափշտակութիւնն է, խլիրդ մը՝ որ կը կրծէ
սիրտդ, կը պղտորէ միտքդ և կը խռովէ հո-
գիդ. թոյն մըն է այն որ չի ներէր և չի գթար:
Այսու հանգրձ, յափտնական յաղթու-
թիւնը և միևնոյն ատեն անպիմադրելի պատ-
ուանքն է այդ:

Ինչո՞ւ համար ուրեմն, կը հարցնէք ինձի,
կուզէք որ սիրենք և սիրուինք քանի որ սէրը
այդքան դաճութիւն կը պատճառէ:

Անոր համար որ սէրը՝ հակառակ իր զը-
ժնդակութեան, հակառակ իր պատճառած
պատարանքին, յուսախաբութիւններուն, թա-
փել տուած արցունքներուն, մարած խանդե-
րուն, պղծած գեղեցիկութիւններուն, մարած
ժպիտներուն, և աւրշտկած խեղճներուն, սէ-
րը աննկարագրելի ցնձութիւններու և անաս-
ման երջանկութեանց արտուածը կը մնայ
միշտ:

Գոյանքիբեր, համոյնները և գրկախառ-
նութիւնները ինչ հրապոյր պիտի ունենային,
ինչ հրճուանք պիտի կրնային պատճառել
եթէ յուսախաբութեան արցունքները. լսցած
և ցաւերու գաճաճութիւնը զգացած չըլլայինք:

Արցունքով չողողուած սէրերը հիւանդ,
ճղճիմ սէրերն են և շուտ կը ցնդին ասոնք
ինչպէս կը մեռնին շուշանները երբ ջուրի
երես չեն տեսներ:

Մեծ, կորովի հոգիներու տրուած է սիրել
գիտնալ, հեռաբար չեմ զարմանար եթէ
ողորմելի արարածներ ասոնց սիրոյ ալ
կրնան ամուսնանալ:

— Հայերը ինչո՞ւ կը կարգուին:
— Շատ բաներու համար, բայց ոչ թէ
սիրոյ:

Չեմ գիտեր թէ կրցայ միայն բացատրել,
ինչ որ ալ ըլլայ սակայն, մածմօրէն խրատ
մը ունիմ ձեզ տալիք սրմէ կրնաք օգտուիլ
սպահովապէս:

Երբ ձեզ համար ամուսնութեան ժամը
հնչէ — աս չըլլալիք բան չէ — այս գը-
րածներս կարգացած ըլլալիդ անգամ մոռ-
ցէք, և թոշ տուէք որ պատկին գնեք ինչպէս
կը պատկին սովորական Մարի մը, Վերթին
մը, Սօֆի մը, Էլպիտ մը, Արապի մը և Պիս-
տոս մը:

«Յօգուածը սկսած պահուս Հանձնեցիք եւ
Բազմապարտիք ըսի, ձեզ: Երբ իմանամ
օրին մէկը թէ որեւէ միտք, Արամի մը կամ
միտքի կարապետի մը կինը ըլլալու վրայ էք,
օ՛հ, այն ատեն պիտի ըսեմ Անձնեցիք եւ
Բազմապարտիք:»

Յ. Ա. ՓԻՍՏ

ԻՆՉ Ե ԴԱՐՍԱՆԸ

Անցեալ անգամ հրատարակեցինք
«Տեղապահ մը ինչպէ՛ս կը փոխադ-
րեն» վերնադրով յօդուածի մը հա-
մառօտ հասուածը, Պօլսոյ Արեւելիքէն
քաղուած:

Տարակոյս չունինք որ ընթերցող-
ները, մեզի չափ և թերեւս մենէ ա-
ւելի, գարշաւնով ու լուսանքով կար-
գացին եպիտելի, անորակելի արարքը
գաւառի ջոջի մը և կամ ջոջերու՝
իրենց մեղսակից խմբակով, որոնք
կին մը—կին մը Հայաստանի կիսե-
րուն էն քոստը, կարելի է ըսել —
իրենց թաքուն շահադիտութիւններուն
տխմար գործիքը ըրած՝ անխղճու-
թիւնը կուսնան իր թեմէն հեռացնել
տալու տեղապահ մը, բարի ու անմեղ,
որուն յանցանքն է եղեր պաշտպա-
նել իր շահերը, որ իր հօտին շահերը
ըլլալու են, չհամակերպիլ կարգ մը
հնադարեան տանկիւլու մարդիկներու:

Այդ հասուածը պարզապէս պաշա-
պանողական էր մեր շնորհունակ դա-
սուն, անոր հացին վրայ իւր բուելու
չափ բարեգէտ,

Առաջինը պիտի ըլլայինք հրատա-
րակել այդպիսի նպատաւոր բաներ,
փրկելու համար մէկ, տառը, հարկուր
կամ աւելի փիլոսոփայութեամբ անարգ
ընթացքով՝ ազարտուած սրբազան
անունը ամբողջութեան մը: Մեր քա-
հանանքը սանկ են, մեր քահանա-
ները նանկ են. այս է այսօր գրեթէ
ընդհանրապէս սիրապետած գաղա-
բարը, անիրաւ, իրաւացի միանգա-
մայն: Ու դժբաղդութիւնը հոն է մա-
նուանդ, որ, Եւրոպայէն վերջ եկեղե-
ցասէր հայերուս մէջ ալ, այս յոռե-
տես, տնաւեր զսուրբարը ծաւալ կը
գտնէ այնպիսի օր մը, երբ դարա-
վերջը մեզի կտակեց համայնական,
ընկերակարական, որմնագրական, ա-
նիշխանական և ինչ. գաղաբարներու ցո-
լացումներ, մին միտէն աւելի՝ զմեզ
եկեղեցիէն ուժացնել տալու հանգա-
մանքը ունեցող: Բայց մարդուն կրօնք
մը պէտք է՝ այսինքն եկեղեցի մը,
կրէ՛ Շաղոպրիան, ինչպէս մարմինին՝
զլուխ մը. եկեղեցի մը միայն որ սուրբ
ըլլայ, ինչպէս իր մեծ հիմնադիրը
սուրբ էր. իր պաշտօնեաները սուրբ
ըլլան, քանի որ իրենք պաշտօնը
սրբազան և երկնային է. իրենց են
Աստուծոյ մը փոխանորդները, հովիւք
հօտից, զոր իրենց առաքիլն՝ սրբա-
կրօն վարքով ու բարքով գէտ ի բա-
րին առաջնորդելու վսեմ կոչումն ու-
նին:

Հաւանինք որ, այսօրուան կղերա-
կան դասուն մէջ, շատ քիչեր կան
գիտակցութիւնը ունեցող իրենց նուի-
րական պարտականութիւններուն:

Մարդ մ'որ չար է, պիղծ է, ինչ
իրաւունք ունի ուրիշին բարի և ան-
բասիր ըլլալ բարոյելու, այն ալ խո-
րանին վրայէն, սրբանուէր վայրի մը
մէջ: Եթէ բարի ըլլալը դիւրին և լաւ
բան մ'է՛ նախ ինք իր անձին վրայ
փորձէ:

Ինչ են հայ կղերին ստորնացման
պատճառները և ինչ՞ դարմանը:

Եթէ պատճառները պրպտելու ըլ-
լանք՝ պիտի տեսնենք թէ, նախ և
յառաջ գլուխն է մեծ պատասխանա-
տուն և ապա՝ ժողովուրդը, կոյր ու
տխմար, որ զպրոցներու մասին շատ
անհոգ գտնուած է, մանաւանդ ան-
ցեալին մէջ, և ընտրելիէն աւելի՝
արժանաւոր մը չկարողանալ գտնելով,
գիտակցօրէն կամ անգիտակից՝ կըս-
տիպուի քահանայութեան կոչել Մաշ-
տոցն ու Աւետարանը «էգպէր» ըրած
թաղի մ'արհեստաւորը, լոշտակ
վարժապետ մը և կամ տիրացու մը,
բարոյականէ զուրկ, միայն ունգաձայն
«Տէր ողորմես» երգելու, բուրվառ
ծխելու վարժ:

Բայց դարման մը պէտք է ասոր,
որ անցեալին սխալները շինէ շտկէ:
Այնչափ կարևորութիւն տալ որչափ
որ անհրաժեշտ է, վարժարաններու
ընթերցատուններու և բարոյախօս լը-
րագիրներու, որոնց կոչումն է պատ-
րաստել՝ ուսեալ, զարգացեալ, իր

կացութեան գիտակից սերունդ մը. ընտրել պատանի մ'առողջ, ուսումնասէր, եռանդուն. տարիներով պահել զինքը վանքի մը մէջ, հոն մահականացու աշխարհի դուրամատչելի փորձութիւններէն հեռի, մշտմտունջ աղօթքի ու խունկի անուշահոտ բուրումներուն մէջ թափանցելու հոգւոյն հրաշալի գաղտնիքները . . .

Եւ այն ատեն պիտի ունենանք մեր փնտռած տիպար «Աստուծոյ մարդը» . բացառութիւնները կրնան ըլլալ :

Հատին կղերը, ֆոանչիսկեանները, ժէզուիթները, ֆոէսները և tutti quanti այսպէս են, այնպէս են. ո՛վ դիտէ քանի՛ հազար հայ բերաններէ թռած են այսպիսի արդար կամ անպիտան բամբասանքներ : Հակառակին վրայ չպնդենք. բայց գոնէ անոնց մէջ գտնուած են ու պիտի գտնուին շատ մը մաքուրներ, անձնուրացներ, մարտիրոսներ, միշտ հեռուները գաղթելու պատրաստ. ու այս ամէնը ամուրի մնալով հանդերձ, և թոշակով մը ինքնին ոչինչ, բողոքական պատուելիներուն առած ուժիկին բաղդատմամբ :

Եզրակացնելով մեր խօսքը՝ պահ մը հաւանինք որ, Հոռովմէական եկեղեցին, որուն մէկ ազատամիտ զաւակն է սոյն տողերը գրողը, ունի իր մէջ շատ փոսած մ'անարժաններ : Լաւ վարդապետ մ'որ ամուսնացած չէ, որ, խեղճը, Եւայի ռիսերիմ թշնամին ըլլալու ցկեանս զատապարտուած է հասկնանք և ներող ըլլանք, քանի որ ան ալ մեզի պէս մարդ է, սխալական է. հապա՛ ինչպէս ներենք հայ քահանայի մը, որ քնքուշ « իրիսկին » ի գգուանքը վայելելով հանդերձ՝ բաներ մը կրնէ որ կը ստակացնէ քեզ : Օրինակը զոր պիտի տանք յաջորդ անգամ, անգամ մ'ևս պոլսական թերթէ մ'առնուած, մէկ հատիկը չէ իր տեսակին մէջ. տեսած ենք այդպիսի ճիւղալիս արարքներ ու ականջով լսած՝ անոնց գարշահոտ արձագանքը, կոյր հաւատացեալի կուս հաւատքը վրդովելու չափ գայթակղական :

Ընթերցողները պէտք է անէճքով կարդան զայն :

Ո՛ր է գործանքը Ս. Օ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Եզրիպտոսի Առաջնորդ Գեր. Յ. Ե. պիսկոպոս Այվազեան այսօր չորեքշաբթի Պոլսէն ճամբայ կելնէ դէպի Եզրիպտոս. հետևաբար Սրբազանը յառաջիկայ կիրակի Աղեքսանդրիա կը սպասուի :

Այս առթիւ ուրախ ենք ծանուցանելու մեր ընթերցողաց, թէ յառաջիկայ մէկ թուով պիտի հրատարակենք Ն. Գերապատուութեան մէկ ընդարձակ կենսագրութիւնը :

Յաջորդ թիւով պիտի հրատարակենք Օմուրմանէն զրկուած շահեկան նամակ մը :

«Արեւիկա»-ի Նոյ. 16 թուին մէջ կը կարդանք :

Պատրիարքարանի պաշտօններուն հանգստեան թոշակ սահմանելու խնդիրը Բաղադրական Ժողովոյ կողմէ ըսկզբունքով ընդունուած ըլլալով, առաջարկուած էր որ խնդիրը հաւաքական գրով մը ներկայացուի Ազգ. Վարչութեան : Այդ գիրը պատրաստուած է արդէն և տեղեկագրով մը պիտի մատուցուի Խառն Ժողովոյ վաղուան նիստին : Անոնց հետ պիտի մատուցուի նաև ծրագիր մը, որուն համաձայն պաշտօնեայ մը այն ատեն միայն պիտի կրնայ հանգստեան թոշակի արժանանայ երբ աշխատելու բոլորովին անկարող վիճակի մը մատուցի : Իր մահէն վերջ հանգստեան ամսական պիտի տոանայ իր զաւակը, մինչև որ չափահատ ըլլայ, իսկ եթէ զաւակ չունենալ կամ զաւակը արդէն իսկ չափահաս ըլլայ, իւր այլին պիտի ստանայ այդ ամսականը ցմահ կամ ցնոր ամուսնութիւն : Իսկ եթէ կին կամ զաւակ չունենայ, զինք հոգացող անձը, ըլլայ կին, ըլլայ այր, պիտի առնէ այդ գումարը, եթէ կարօտ է : Պաշտօնեայ մը երբ իր պաշտօնէն իր յօժար կամքը հրաժարի, միայն տուած գումարը առնելու իրաւունք պիտի ունենայ, իսկ եթէ ու է յանցանքով պաշտօնանկ ըլլայ կամ արտաքսուի, իրաւունք չպիտի ունենայ ո՛ր և է գումար պահանջելու : Վարչութեան ներկայանալի ծրագրին ոչխաւոր կէտերը ասանք են ահաւասիկ, որ յետ հաստատութեան կրնան գործադրուիլ :

Վանէն «Մշակ»-ի կը գրեն

Գիտէք, որ Գահիրէի մէջ որբայնամ մարմին մը կազմուած էր ասիէ առաջ վանեցիկներէն, որոնք Վարդապայ սրբանոցին մէջ ութը որբեր կը պահէին իրենց ծախքով, և որոնք իրենց տեղւոյս պատուակալ ներկայացուցիչ ու խնամակալ կարգած էին մեր ազնիւ, ու համակրելի երտասարդներէն Պ. Խաչատուր Լևոնեանը :

Արդ, այս շաբթու սոյն որբայնամ մարմինը 50 անդրիական ոսկի ալ զըրկած է հոս՝ վեց որբ ևս պահելու համար Վարդապայ մէջ, որով ընդամենը 14 որբ կունենան իրենց հաշտոյն՝ որ քիչ պատուաբեր չէ մեր այդ հեռուոր եղբայրներուն համար : Արդեօք այս պարագան բարի գրգիռ մը ըլլալու չէ՞ Ռուսաստան, Բուլղարիա, Ամերիկայ և այլն գտնուող մեր շատ մը հայրենակիցներուն՝ հետեւելու համար Եզրիպտոսի Մասնակի միջն ըրի նապիտիւններէն որ շատ թեթեւ խնայողութիւնով ալ կը ըլլայ :

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11 ԷՆ ՍԿՍԵԱՄ, ՎԱՐՁՈՒԹԵԱՆՍ ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՑ ԾԻՄԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՋԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՂԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱՒԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐԻՒՄ

Պուրական թերթերը կը ծանուցանեն թէ Պարսից Մուզաֆ-Քէրէտուի Շահը թէրթեան համեմուն պէս հրամայեր է նախարարացեալին և ներքին գործոց նախարարին որ ազնուական ընտանիքներէ հասն և հինգ տարիի երիտասարդներ ընտրուին և զինուորական բարձրագոյն վարժարանը յաճախելու նպատակաւ Կ. Պոլիս զըրկուին :

Այդ առթիւ Պարսկաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը թէ՛ Շահին օսմանեան գեապանին հետ բանակցութեան մտեր է :

Կերեկի թէ Պուրական Թուրք թերթերն ի մասնաւորի «Իգտամ» թերթէն որ Սուլթանի ազգեցեալութիւնը բնութարանի ընող օսկան մ'է, գործին եկած չէ յիշել թէ, Նոյն ինքն Սուլթանը խնդրած է Շահէն որ Պարսիկ ուսանողներ Պոլիս զրկուին զինուորական ուսում և կրթութիւն ստանալու : Անշուշտ մասնաւոր գիտիմով եղած է այս առաջարկը Սուլթանին կողմէն : Բայց Շահը չենք կարծեր որ կարգուրթիւն տուած ըլլայ այդ խնդրոյն : Նամանակահոգ որ Շահը երբ Պոլիսէն մեկնեցաւ, Սուլթանին իրեն ընդունելութիւնէն շատ զո՛հ չի մնաց :

Ամիսէ մը ի վեր է, որ Նոր օրէնք մը յայտարարուած է թրքական Կառավարութեան կողմէ, այն է, թէ՛ Եզրիպտոսէն և թէ՛ այլ արտասահման եկրէ եկող ճամբորդներու անցագրին վրայ տեղւոյն տասնհազար ներկայացուցիչ վկայութիւնը պիտի գտնուի, քանազան կար ոմն չըլլալու նկատմամբ, հակառակ պարագային ես կը դարձուին :

—Գերման Մամուլը միշտ համակիր է Գերմանիոյ միջամտութեանը Պօքրներու և Անգղիացիներու պատերազմին վերջ մը տայու համար : Այդ լրագիրէն «Կազէթ Նասիօնալ»-ը կ'ըսէ. «Պօքրներու Հերոսութեանը համար Պօքրուկէրը պէտք է համակրանք ընդունինք. և անոր այցելութիւնը Գերմանիոյ քաղաքականութեան արդեօք չըկրնար ըլլալ, նա կրնայ դարձել իր շահերը պաշտպանելու» :

—Կըսեն թէ Վիքթորիա Թագուհին Նիս պիտի երթայ զատկին, ճիշդ այն պահուն որ Պարսկաստանի նախագահն ալ հոն պիտի ճամբորդէ :

—Կըսուի թէ Հնդկաստանէն Պուտա քահանաներու առաքելութիւն մը Լոնտոն Թագուհին քով պիտի երթայ : Ասոնց նպատակն է եզեր Վեհապետութիւնէն խնդրել ոչ ծանր պատիմներու անօրինէ կողմի միտ ուսող հնդիկներու, որովհետև ամենահին դարերէ ի վեր Պուտայայականութիւնը նուիրական կենդանի մը կը նկատէ Կովը, ու հետևաբար բոլորովին հակառակ է այդ օրէնքը համանուն կրօնին :

ՍՈՒԼԹԱՆԸ ՀԻՒԱՆԻ Է

«Պէրլինէր Թակէպլատ» թերթը կը հաղորդէ թէ Սուլթանի առողջութիւնը բոլորովին խանդավառ է, կը տառապի կուրծքի հիւանդութենէ մը և չի կրնար ննջել առանց քնարեր դեղերու : Սուլթանին ծանրապէս հիւանդ ըլլալը կը հաստատեն նաև անոնք, որոնք վերջերս զայն տեսած են Սէլամէ լրքի մամանակ :

Սուլթանին անցուցած կեանքը գիտցողներն Նոյիսի կը զարմանան թէ՛ ինչպէս ան մինչև որս կարողացած է տուկալ իր երիտասարդ հասակին մէջ Համիտ ամենէն անուսն իշխանազուններէն մին էր : Գիշեր ցերեկ ան կը թապուկէր անբարոյականութեան մէջ. իսկ զահը բարձրացած օրէն սկսեալ շարունակ յուզումներու և տուայտանքներու ենթարկուած է : Աղիւրի սպանումը և հարազատ և կոր Մուրտուի սոսկալի վիճակը կը տարապիտեցին վախիտ Համիտը : Այլի զարնող վախիտ մըն է այս Սուլթանը, որ միշտ կը գողայ իր կեանքին համար : Անոր հոգւոյն մէջ տիրապետող վախը զինքը հարկադրած է գահ բարձրանալու օրէն սկսեալ, միայն իր անձն պաշտպանութեան համար մտածել : Անիկա թուց վախիտի հրաշալի պաշտանները և բարձրացու Պէշիկթաշի բարձունքին վրայ ուր յայտնուած գործելը գտար է, թէ ծովէն և թէ ցամաքէն Համիտ Երբող քէօ կը իսկոյն շքեղ պալատ մը գարձուց և զայն շքեղապատեց ուսելի շքեղ սպարանքներով : Երբողը շուտով մը քաղաքի վերածուեցաւ պարիսպներով, և իրաններով, զօրանոցներով և աշտարակներով շքեղապատուած :

Միտհատ փաշան և իր ընկերները որոնք սպաննեցին Աղիւրը և բանտարկեցին Մուրաթը բոլորն ալ քարտուեցան և սպաննուեցան : Նախ Համիտ անձնատուր եղաւ Չէրքէզներուն և անոնցմէ ստեղծեց իր թիկնապահ զօրք : Բայց չէրքէզներու կողմէն Պալատին մէջ եկած խռովութիւնները Համիտ տիպեցին ուրիշներու գիւրկը իյնալ : Թուրքերուն վրայ բոլորովին հաւատ չունէր. իսկ չէրքէզները զինքը խտրեցին : Ու՛ր փնտուէր իր պաշտպանութիւնը : Վերջապէս հասաւ այն համակրան թէ՛ միապետ մը հանդիստ կրնայ ըլլալ միայն տգէտ շքեղապատեցներ ունենալով, ուստի սկսաւ Պուլատէն հեռացնել կրթուած պատուաւոր տարրը :

Պալատ հրաւիրուցան Ալպանացիները, քիւրտերը և Պոսնայիները, որոնց յանձնուեցան Պալատական բորձըր պաշտօններ : Սուլթանը նախկին տրիւնուշտ աւաղակներէն կազմեց իր թիկնապահները (թիւֆէնիկի) : Ասոնցմէ զատ, Լաղերէն, Արաբներէն և Ալպանացիներէն կազմեց թիկնապահ զօրադուներ : Այդ զօրագունքին մէջ մուտք չունին կրթուած սպաները : Անոնք Թուրքիոյ զօրքերուն մէջ ամենէն լաւ վիճակը ունին, թէ՛ մեծ ուժիկ կրտանան և թէ՛ լաւ զգեստ կը կրեն :

Ասոնց արտօնուած է ամեն բան ը- նեւ, միայն թէ փաստիչահին հաւատա- րիմ մնալ :

Բայց իր անձը բոլորովին պաշտպա- նած ըլլալու համար Սուլթանը պէտք է ամբողջ կառավարութեան ղեկը իր ձեռքը առնէր : Կամայ կամաց Բարձ- րագոյն Դուան կարեւորութիւնը և ազ- դեցութիւնը ինկաւ, նախարարները դարձան մէյ մէկ խմածուկներ և Մեծ Եպարգոսը՝ հասարակ պաշտօնայ մը :

Ամէն բան կեդրոնացաւ պալատին մէջ :

Այժմ ամէն կարգադրութիւն երբ- տրդէն կեղայ :

Ասոր համար ալ, երբ ամբողջ զօր- քը մերկ և անօթի է, երբ բոլոր պաշ- տօնեաները տարուան մէջ երկու ամ- սական հազու կընդունին, երբ սովը և չքաւորութիւնը կը տիրապետէ ամ- բողջ կայսրութեան մէջ երբեք զեղ- խութեան մէջ կը թաղըլտկի : Տօրքե- րը, կաշառքները և թալանները, բոլորն ալ պայտ կը թափին, Սուլթանը ա- ռապալական հարստութեան մը տէր դարձած է Պալատական տաղանները դրամատուններու մէջ միլիոններ գի- ղած են, ընդարձակ աղաքալներ ան- տուներ, հանքեր ու հրաշայի ապա- րանքներ ունին : Այսօր արդիւնաւէտ թրքական ամբողջ կայսրութիւնը օրն ի բուն կայսրատի երկրորդին համար :

Այնու ամենայնիւ, Սուլթանը իր ան- ձը պաշտպանելու այնքան միջոցներ ձեռք առնելով հանդերձ, օր մը հան- գիստ չէ եղած, գիշեր մը առանց խը- ուփութեան չէ քնացած : Սարսափը զայն կը տանջէ անխղճօրէն, ինչպէս ինքը, Սուլթանը, կը տանջէ իր միլիոն- աւոր հպատակները եւ իսկապէս, ինչ- պէս կընայ հանպիտա ըլլալ, քանի որ իր կեանքը կը գտնուի երեկուան աւա- զակներու ձեռքը : Որչափ ալ ասոնք հաւատարիմ ըլլան, դժգոհութիւն մը միայն կը բաւէ իրենց սուրբը մերկա- ցնելու, իրենց տէրը խողիտողելու հա- մար : Ուստի Սուլթանը որչափ արտա- քին թշնամիներէ կը վախնայ, ևս աւե- րկ կը վախնայ իր պաշտօնեաներէն :

Այսպէս Սուլթան Ապտիլ-Համիտ միլիոնաւոր ժողովուրդներու միապե- տը, մարգարէին փոխանորդը, չը նա- յելով որ պահուած է բարձրաբերձ պա- րիսպներու և հազարաւոր սուլիմներու ետեւը, և սակայն սրտի վախէն հան- գիստ չունի :

ՉՅ տարի շարունակ Համիտ սար- սափի մէջ կապրի, ՉՅ տարի շարունակ այդ վախկտը միայն իր անձը պաշտ- պանելու միջոցներու մասին կը խորհի : Սակայն սարսափը օրէ օր կը սաստկա- նայ : Եւ իսկապէս զարմանալի է որ ան մինչև հիմայ կապրի :

Բայց ընտրութիւնը անկողնակալ է գէպի ամեն ինչ : ան միատեսակ կը վերաբերուի թէ հարուստին և թէ աղ- քատին, թէ ստրուկին և թէ թագա-ւորին հետ : Կը մտենայ ժամանակը՝ երբ ընտրութիւնը իր հաշիւները պիտի պահանջէ : սյր անօրինակ բռնակալէն, որ իր պալատը դարձուցած է աւա- զակներու որջ մը իսկ իր կայսրութիւնը ամենակեր դժոխք մը . . . :

ՇԱՐԺՈՒՄ

Ա. Զ. Դ

Շատերու կողմէ յայտնուած փա- փաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու դիւրութիւն մը ըն- ծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շա- րա Ապտիլ-Ապիգի սկիզբը Պ. ԿԱՐԱ- ՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Դրոթ-Պէյ փողոցի ծայրը և թը- րամիլէյներու կայարանին մօտ ծխա- վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով :

Ա. Զ. Դ

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խա- նութը ի Շարա Ապտիլ-Ապիգ :

ՕՐԱՅՈՅՑ ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ 1901 ՏԱՐԻՈՅ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՓՐԿՉԻ Ա.Զ.Դ. ՀԻՄԱՆԳԱՆՈՑԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Շրջակայ գիւղերէն եկած յանձնա- րարութիւնը փութով կը կատարուին Դիմել վերոյիշեալ հասցէին :

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միտիլին».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՍԵԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Հիտնի հանրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. ՄԿՐԻՄԻՅ ՍՕՍՕՅԵԱՆ, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամե- նուս վատահոլութիւնը կը վայելէ :

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Հիտնի քաղա- քապետութենէն պաշտօնապէս վա-ւերացուած փոխանորդազրի համա- ձայն, պիտի կատարէ Պանգ Հիտնիցի միջոցաւ ամեն տեսակ դրամական և ֆուէտի ֆոնդիէն, Վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ : Սմա- կան չնչին գումարի մը խնայողու- թեամբ ձեռք կը բերուի քիչ աստեղէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա- հանութեամբ երաշխաւորուած :

Փափաքողները հաճին ղիմել Նիւ- պառի վրայ փաստարան Ռարթաքիի դրամանեակը :

Թղթակցութիւն և կամ դրամ զըր- կել հետեւեալ հասցէին :

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ ար լա Պուրի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը :

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները : Աղքատ- ները ձրի կը դարմանէ ամեն օր, ա- ռաւօտեան ժամը 8էն 9 :

ՊԵՍԵՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՅ ԵՒ ՏԻՆԱՆՑ

ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիմի մեծ պողոսային վրայ Տայիբայի Սանիթի ղիմացը, Բ.Սիկիմ երկրաւակն գործիներու վաճառատներ :

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարա- րենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ ղիմոյ Պաս. յաճախորդները, գործի մաք- րութեան, գիներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն :

Մեր գործատեղւոյն մէջ կ'ուան- դուին նաև ձևադիտութեան դասեր ամերիկեան ամենայնթիւն կատարե- լագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար ղիմել մեր գործատեղին :

ՃԱՏԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՐ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապտիլ-Սապահ

Նիւտ.-Տնիկերսեյ Ղեղարանին ղիմացը.

Օղատուն ու զուարճալի ղիլքը մա- քուր ու վայելելի սպասու համեղ ու սննդարար կերակուրներու ղանազա- նութիւնն, անխարդախ պատրաստու- թիւն. ճիւ ճաշացուցակ մը ղիւրա- մատչելի գիներով. ահա՛ Գազանձ- եան եղբարց ճաշարանը :

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող ղիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի գառնայ հայկական ճաշարանին :

Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄ 8

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ աւարանին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա- րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետուներ, մահազոյր, հարսանաց հրաւիրագրեր, կանոնադիրներ, նամակազուրխներ, պահարաններ, հաշուեցուցակներ են :

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք եւ նաշակաւոր սպագրութեամբ :

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ